Որակի քաղաքականություն

ORIGIN

«Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ հանդիսանում է սերտիֆիկացման մարմին, որը մատուցում է ինչպես արտադրանքի, այնպես էլ կառավարման համակարգերի սերտիֆիկացման ծառայություններ:

Կառավարման համակարգերի սերտիֆիկացման բաժնի առջև դրված նպատակն է հաճախորդներին մատուցել բարձրորակ, արդյունավետ ծառայություններ, որոնք հասանելի կլինեն ինչպես տեղական, ԵԱՏՄ տարածաշրջանի, այնպես էլ միջազգային սպառողների լայն շրջանակի համար: Մասնավորապես մեր նպատակն է.

1. *Իրականացնել կառավարման համակարգերի սերտիֆիկացում ISO 9001, ISO 27001 և ISO 14001 միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:*
2. *Իրականացնել կառավարման համակարգերի ներդրում և խորհրդատվություն միջազգային ստանդարտների (ISO, GxP և այլն) պահանջներին համապատասխան՝ պահպանելով ընկերության կողմից որդեգրված անկողմնակալության քաղաքականությունը (POL-003-00-01):*

Հիմնական նպատակին հասնելու համար, «Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ ղեկավարությունը պարտավորվում է՝

- *Շարունակաբար բարելավել ամբողջ ընկերության շրջանակներում կառավարման համակարգի աշխատանքի արդյունավետությունը՝ ISO 9001 և ISO 17021-1 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան:*
- *Բավարարել բոլոր հաճախորդների պահանջները՝ առաջարկելով բարձրորակ, արդյունավետ և մատչելի ծառայություններ:*
- *Հաճախորդների պահանջների բավարարման համար ունենալ արհեստավարժ և իրազեկ աշխատակազմ:*
- *Կատարելագործել սպառողի գոհունակության գնահատման մեխանիզմը և բողոքների վերլուծության համակարգը:*
- *«Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ աշխատակիցների համար ապահովել այս քաղաքականության հասանելիությունը և ընկալումը:*

Հաստատված է՝

Տնօրեն Հ. Թաշչյան

Գործողություն	Անուն Ազգանուն	Պաշտոն	Ստորագրություն	Ամսաթիվ
Կազմեց				
Վերանայեց				
Հաստատեց				
Լիազորեց				